

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

Ք. Եղեգնաձոր

26.06. 2015թ.

Սույն թվականի փետրվարի 26-ին տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի այս տարվա երկրորդ նիստը:

Նիստին ներկա էին՝

Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամներ՝

- Հարություն Սարգսյան-նախագահ, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ Վարդան Ավագյան-Եղեգնաձորի փոխքաղաքապետ
- Գագիկ Մարգարյանը-Եղեգնաձորի ավագանու անդամ
- Հասմիկ Մարգարյան-ՀԵՀ Վայոց ձորի մարզային կենտրոնի համակարգող
- Արգիշտի Միքայելյանը - <Թայմ Տուր> ՄՊԸ տնօրեն
- Հովիկ Մնացականյան-Մալիշկայի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար
- Անուշավան Մովսիսյան -Վայոց ձորի տարածաշրջանային պետ. քոլեջի դասախոս
- Գոհար Թաղևոսյանը- Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար
- Սյուզաննա Ավետիսյանը-Ջերմուկի Երիտասարդական կենտրոնի տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ

Նիստում քննարկվող հարցեր

1. Ջորակոչային և նախագորակոչային հասակի պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպում,
/Ջեկուցող՝ Ա. Հովհաննիսյան/
2. <Բազե>համահայկական երիտասարդական հավաքի Վայոց Ձորի ջոկատի կազմավորման նպատակով մարզի համայնքներում շնորհալի երիտասարդների հայտնաբերմանն ուղղված աշխատանքներ
/Ջեկուցող՝ Հ. Մարգարյան/
3. 6-րդ Համահայկական խաղերին մարզի պատշաճ մակարդակով մասնակցություն
/Ջեկուցող՝ Ա. Հովհաննիսյան/
4. Ուսանողների ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում
/Ջեկուցող՝ Հ. Մարգարյան/

5. Վայոց Ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին

/Հ. Մարգարյան/

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ

1. Ձորակոչային և նախագորակոչային հասակի պատանիների շրջանում մարզի մասշտաբով միջոցառումների կազմակերպման հարցերը, այդ գործընթացում տարբեր կառույցների և ՀԿ սեկտորի ներգրավվածության ապահովման գործընթացը,
2. Եղեգիս համայնքում տեղակայված <Սիրանույշ> ճամբարում <Բազե-2015> համահայկական երիտասարդական հավաքի մարզային փուլի կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ,
3. 6-րդ Համահայկական խաղերին մարզի մասնակցության հնարավորությունները, դժվարություններն ու առաջարկներ,
4. Մարզի ուսանողների ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովման համար տարբեր կարծիքներ և առաջարկություններ,
5. Վայոց ձորի մարզպետ, մարզպետին կից երիտասարդական խորհրդի նախագահ Հարություն Մարգարյանի կողմից առաջարկվեց Արթուր Սմբատյանի թեկնածությունը՝ որպես խորհրդի անդամ Վասիլ Ասլանյանի փոխարեն: Ներկաները միաձայն կողմ քվեարկեցին առաջարկին:

ՈՐՈՇՎԵՑ՝

1. Իրականացնել ռազմա-հայրենասիրական ուղղվածությամբ միջոցառումներ և ակցիաներ
2. Կազմակերպել ամառային երիտասարդական հավաք <Սիրանույշ> ճամբարում՝ ընդգրկելով մարզի 10 համայնքների 80 երիտասարդների,
3. Կազմակերպել ուսանողական հավաք ներ և միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ուսանողների ազատ ժամանցի ապահովմանն ու ակտիվացմանը,
4. ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի անդամ ընտրել Արթուր Սմբատյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆ